է ունիլ գօտի 'ի մէջ ածեալ սուսերօք, իւրաքանչիւր զինօք պատրաստութեամբ մինչև դրունս սրբոյ Եկեղեցւոյ և անդ հանգուցանել 'ի յերեսս երկրի զէնս իւրեանց համարեալ կարգելով չափաւոր պահակ 'ի վերայ զինուցն անդ թողելոյ, և ինքեանք մտցեն 'ի տուն Տեառն և կացցեն յաղօթս, յետ կատարելոյ սրբոյ պատարագին կարգաւ ելցեն 'ի դրունս 'ի ձեռս կալցեն իւրաքանչիւր զէնս իւրեանց երթայցեն 'ի տեղի իւրեանց և ապա 'ի տեղէ իւրմէ ելցէ միւս գունան առ դրունս սրբոյ եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ ՅՂԶ.

Ոչ ոք 'ի մէջ աշխարհին հայոց ակնկալութիւն ունիցի զի լինիցի պատուեցեալ 'ի ումեքէ, բայց 'ի բարութենէ գործոց ձեռաց իւրոց այլ եթէ գուցէ զի յումեքէ լինիցի պատուեցեալ եթէ խորհրդով։ բանիւ և գործով պարտ է նմա յոյժ քաղցր դիմօք հեզ և խոնարհութեամբ շնորհ ընկալ 'ի նմանէ լինիլ զի նա արժան է շնորհակալութեան, 'ի պատճառն երախտագիտութեան նորայ, զի նա ծանեաւ բարոյականութիւն առն արժանի պատուոյ։

ԳԼՈՒԽ ՅՂԷ.

Օրէն է մեզ ոչ շաղախիլ 'ի գործս եկեղեցականաց և թոյլ մի տալ էկլէզիաստիկս շաղա-